Funded by European Union Humanitarian Aid

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

World Health Organization
Armenia

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ
ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հոգեկան խանգարումները համընդհանուր առողջական խնդիր է ողջ աշխարհում: Բոլոր երկրներում և մշակույթներում կան մարդիկ, որոնք ունեն նման խանգարումներ:

ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Յուրաքանչյուր պահի աշխարհում ամեն տասը հոգուց մոտավորապես մեկն ունի հոգեկան խանգարում, և յուրաքանչյուր չորս ընտանիքից մեկն ունի հոգեկան խանգարում ունեցող անդամ:

Ամեն տարի ավելի քան 800 հազար անձ մահանում է ինքնասպանության պատճառով, ինչը 15-29 տարեկանների շրջանում մահացության երկրորդ ամենատարածված պատճառն է: Ինքնասպանությունների մոտ երեք քառորդը տեղի է ունենում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում:

Հոգեկան և նյարդաբանական խանգարումներ ունենում են բոլոր տարիքի մարդիկ: Աշխարհի երեխաների և դեռահասների շուրջ 20%-ն ունի հոգեկան խանգարումներ կամ խնդիրներ, և բոլոր հոգեկան խանգարումների շուրջ կեսը սկսվում է մինչև 14 տարեկան հասակը:

ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԲՈՒԺՎԵԼ

Լավ նորությունն այն է, որ արդյունավետ բուժումը հնարավոր է դեղամիջոցների և/կամ հոգեսոցիալական աջակցության միջոցով, ինչպիսին է, օրինակ՝ հոգեբանական խորհրդատվությունը: Հոգեկան խանգարումների վաղ ախտորոշումն ու արդյունավետ վարումն էական են մարդկանց անհրաժեշտ խնամքն ապահովելու համար: Այնուհանդերձ, հոգեկան խանգարումներով անձանց ճնշող մեծամասնությունը՝ 76%-ից մինչև 85%, աղքատ երկրներում բուժում չի ստանում: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ եղած ռեսուրսներն անհասանելի են կամ արդյունավետ չեն օգտագործվում, բայց նաև այն պատճառով, որ հոգեկան խանգարումների հետ կապված համատարած թյուրըմբռնումն ու խարանը կարող են լուրջ խոչընդոտներ հանդիսանալ և թույլ չտալ, որ մարդիկ դիմեն օգնության:

Թեև հոգեկան խանգարումները կարող են հաջողությամբ բուժվել, շատերը կարծում են, որ դրանք անբուժելի են, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց հետ դժվար է գործ ունենալ, որ նրանք խելացի չեն և կամ ունակ չեն որոշումներ կայացնել: Այս խարանը կարող է հանգեցնել նրան, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքները չարաշահվեն, անձը մերժվի, մեկուսացվի, զրկվի բժշկական օգնությունից կամ համապատասխան աջակցությունից:

Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է բարձրացնել հանրության իրազեկվածությունը հոգեկան խանգարումների մասին:

Մարդիկ պետք է հասկանան, որ դրանք շատ տարածված են, կարող են պատահել յուրաքանչյուրի հետ և կարող են հաջողությամբ բուժվել:

ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ՈՉՆՉՈՎ ՉԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՄՅՈՒՍՆԵՐԻՑ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ
ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Այս տեղեկատվական թերթիկը մտնում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տեղեկատվական շարքի մեջ, որը մշակվել է հանրության լայն զանգվածներին հոգեկան առողջության խնդիրների և դրանց բուժման մասին համապարփակ տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Դուք կարող եք ծանոթանալ բոլոր տեղեկատվական թերթիկներին սքանավորելով QR կոդը:

Սույն թերթիկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում բացառապես ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© Առողջապահության համաշխարհային կազմակերպություն 2019
Որոշ իրավունքներ պաշտպանված են: Սույն նյութը կարող է օգտագործվել Creative Commons Attribution-NonCommercial-ShareAlike 3.0 IGO արտոնագրի շրջանակներում (CC BY-NC-SA 3.0 IGO;https://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/igo)